

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE

Ձի հրատարակումը ձեռնարկները ես չեմ տրուիր :

Բաժանորդագրողինը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ :

Գրքերի և արձանագրութեան ԵՂՅԻՔԻ ԹՈՐՈՒՄՆԵՐ

ԱՐՇԱԼՈՍԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ր Ե Ր Թ

ՊԱՅՄԱՆՔ

ԵՂՅԻՔՈՍ

Տարեկան դրոշմը 30

ԱՐՏԱՍԱԿԱՆ

Տարեկան փրակը 10

Բաժանորդ ՁԱՒԵԼՈՒՄ ԵՆՈՒ փոխարէն վճարումէ գերծ պիտի ըլլան :

Թե՛ ԱՐՇԱԼՈՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց հարևար պէտք է դիմել ներքազոյրեան հասցեով քերթիս մասնակարարին, որ է՝

ԳԵՐԹ՝ ՓԱՓԱՔԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱՐՈՒԻ ՉՈՐԵՐՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներու և գրական պատասխաններու ան ինքնից գրածներուն

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂԱ

Գահիրէի Ազգ. Առաջնորդաբանէն հետեւեալ Պատճէնը հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն իՄՐ.:

ՊԱՏՃԷՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼԻԹ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԱԶԳ. ԿԵՐԻ. ՉՍՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 696

24 Ապրիլ 908

Գերազնորէ Տ. Մկրտիչ Մ. Վարդ. Աղաւնունի Առաջնորդ Հայոց

Եգիպտոսի

Ինչպէս մեր 908 Ապրիլ 4 թուականի պաշտօնագրով ծանուցած էինք, Ձեր վերջերս յղած եւ Աղէքսանդրիոյ մէջ անպաշտօն կերպով գտնուող Տ. Գեորգ քննչ. Հիւրմիւսքեանի նկատմամբ կարի անպատասխան տեղեկագիրը յանձնած էինք Կեղք. Կրօն. Ժողովոյ ուշադրութեան :

Պատկ. Կրօն. Ժողովն նկատելով որ քանիցս ազգաբարոյական և ինչեւէ քաջանային Պատրիարքարանի չ'անտատելի և անվայել արարքներու մէջ չ'ընդունուի, եւ նկատելով որ նա դարձեալ կը շարունակէ իր անպատասխան ընթացքը ու յանդգնած է ընդգծել Հայ. Ուղղափառ Եկեղեցւոյ հնաւանդ կանոնացապօրէն պահ մը ձեւացնել, որոշեց անվաւեր հոշակեղ այդ պատկեր, եւ զրկել զինքը քանակապէս պաշտօնէն եւ քանակապէս արտօնանք անին գործերէն եւ կարգապահի հոշակել, եւ այս առթիւ վերջապէս ազգաբարեւ իրենի որ եթէ ճանտուան միջոցի մէջ չ'ըզգաստանայ եւ կրկին բողոքներու տեղի տայ, իսպառ կարգաւորվի պիտի հռչակուի :

Սոյն որոշումները հաղորդելով Ձեզ ի գործադրութիւն

Մնամք աղօթարար Պատրիարք Կ. Պօլսոյ (ստորգ) Մաղաթիա Արքեպիսկոպոս Բնագրին յար եւ նման է : ԿՆԻՔ ԱՌԱՋՆՈՐԿՈՐԴՄՈՒՆԻ

ԹՅՈՒԱՌ ՀԱՅՐԵՆԻՔ

Ս. Զատիկը անցաւ, սաստկաշունչ ձմեռը իր անինայ կեղծքով ներով լափեց կողպատեց Հայու ընտանաբանի վերջին կաթիլը, քանի՜ քանի՜ սրտաճմլիկ պարագաներու քակ. խեղճ հայը լանկայած էր գուհացում տալ թշուառացնող այդ բնատուր մեծ աւապակապտին, մին, իր թանկարժէք տունը աննշան գու-

մարի մի փոխարէն գրաւ դնելով, միւսը՝ իր դեռատի հարսի օժիտը ծախելով, ուրիշ մը՝ բքուտ՝ Զատիկէն վերջ՝ երբ օգերը ներէն, իւրաքանչիւրը տասն փարայի հաշուով, հաղար սափոր պատրաստելով յանձնելու պայմանաւ հազար զուրուշը հաղար տասնոցի կանխիկ ծախելով՝ չորրորդ մը՝ որմնագիր, գարնան անձրեակարգը գաղթելէ վերջ, հարիւր օրէն կառուցանելի շէնքի մը շինութիւնը ստանձնելով՝ և քսան զուրուշ արժող իր օրականը հինգ զրոյի ծախելով, վերջապէս հինգերորդ մը, ամիսը 10 - 15 զրոյի առ 100 տոկոսով վեց ամիսէն վճարելի քանի մը հարիւր զրոյի փոխառութեամբ հազու կարողացած էին հայթայթել իրենց բազմանգամ ընտանեաց միայն ցորենէ յօրպայց մը և սաքուկ թնկեր մը :

Գիւղացին ալ, իր ասպնջաւոր սովորութիւններն չ'խափանելով՝ գոնէ իր համեստ սեղանը անցնող դարձողներու առջև կանգուն պահելու համար, իր կարողութեանն ու վարկին ներած չ'ափովը. ո՛չ նուազ կսկծեցուցիչ միջոցներու գիւմած էր պարտքերով ծանրաբեռնուելու, — աւակալին չը ծնած ոչ խարի մը ուլը, կովու մը հորթը, մատակի մը ձագը, հողի մակերեսէն ի վեր դեռ ծիւրը չ'արձակող հունտերու՝ յառաջիկային տալիք արդիւնքը, ողորելի գումարներու փոխարէն ծախելով :

Աւելցնենք որոշեալ ժգամանակնուն անյարպազ վճարելի սոյն պարտքերու վրայ նաև կառավարական զանազան ծանրակշիւ տուրքերը, և անոնց հաւաքիչ ու ինքնակոչ պաշտօնէից ըլլալիք սովորական անարդար վճարումները, շահադիտական նպատակներով չըջող այդ բիւրազան պաշտօնէից կողմէ ամենօրեայ յարուցանելիք քաղաքական և յայնցանքներու վերագրելի խնդիրներու առթիւ ըլլալիք անկուսափելի գրհոյութիւնները, քիւրտ ցեղապետներու և անոնց արքանեակ վարչապետարոյ ցեղակիցներու կողմէ ի գործ գրուելիք կողպատումները, սպանութիւնք՝ սով՝ երկրաչարժ, հրգեհ, և այն ատեն պիտի կարողանանք որոշ գաղափար մը կազմել հայրենեաց ձորերու և ծորձորներու

քաղանձաներն ապաստանող այդպի մը հայերու ողբալի վիճակին վրայ :

Անդին, հայրենեաց փոշիին վերայ նստած մեր այդ պի մը եղբայրները կրօնամարտիկ մանկաւիկներու պէս համբերատար ու արիւնշաղախ, բնական և դրական ամէն կերպ տառապանաց ու խողխողումներու քաջակազմ ու դիւրաշնարար կուրծք տուած՝ կը դատեմարտին սև ճակատագրի հետ, չ'ունենալով ողբակից մը, տէր մը, պաշտպան մը, միտքարիչ յուսատուութիւն մը, աւա՛ղ . . . :

Առաջին քայլափոխից իսկ պիտի հանդիպէիր խումբերու — հայու թշուառութեան պատկերներու — այր կին, երեխայ, պատանի, օրերորդ, ցնցոտիներով շաղախուած, բոկոտն ամօթալի կիսամերկութեամբ ձեռքերնին կուրծքներուն վրայ խաչաձևած թշուառութեան արհաւիրքներէ լիկեալ ու գողահար, անթոթութեան կիսամեռ ըլլալու աստիճան նուազիտ՝ կը դեգերին փողոցէ փողոց, տունէ պուն, գիւղէ գիւղ մուրալու, փղձկելու պատրաստ արտասուելից այօք ճիւղ ծուռ խնդրելու, ողբալու, պաղատելու աղաղակելու և քծնելու պատառ մը հացի, կտոր մը ցնցոտիի համար և ո՛վ յուսախաբութիւն, միշտ ձեռնուռնայն գլխիկոր ու ամօթաւար կտ գառնալու :

Մէկէն ի մէկ, ահաբեկող կոչեր աղաղակներ պիտի լսէիր. ետ դառնալուդ՝ պիտի տեսնէիր հրացանաճուրթեան մ'առթիւ ահաբեկեալ ազգաւներու ցիր զու ցան թռչնեթաւ կատարեալ պատկեր մը, — կողկողազին ձիւր, — ամա՛ն, ամա՛ն, կը պառան կը ճչեն — գիւղի կոչն է այնմին՝ իր արօրը, միւսը՝ խոփ մը, ուրիշ մը՝ կտոր մը թաղիք, մայրն իր ծծկերը, պառաւ մ'իւր ցնցոտին, ծերունին իր թոռնիկը գրկած, կուրծքերնուն սեղմած՝ կը փախչին. միշտ լայով աղիողորժ կոչերով, կուրծքերնին ծեծելով մազերնին փետտելով. — և ո՛վ Աստուած, քիւրտ ցեղապետէ մը հալածեալ այդ գերինները ի՞նչ գրտառուշ նկարագրութիւններով կը պարզեն իրենց ցաւերը, գիշերէն մինչ առաւօտ իրենց կրած զանազան տառապանքները . . .

Թէ՛ ի՞նչ ստակալի խոշտանգումներու ու տանջանաց ենթարկելով լախլախած էին երիտասարդ մը, ջարդեր էին կնոյ մը գլուխը, երկու ոտքերէն՝ ծառէ կախելով՝ շնչայեղձ ըրած էին չափահաս էրիկ մարդ մը անլուր ստորնաքարը միջոցներու՝ տակ բռնաբարած էին մանկամարդկները, քչեր տարեր էին գիւղի նախիրը՝ լեռան կողերէն կապուած վիճակի մէջ վար գլորելով պահապան հօտաղներն ու հողիւնները, ու դեռ չը բաւականանալով սոյն խժգոնութիւններով՝ կրակի ալ մասններ էին մէկու տունը, միւսի մարագը ուրիշ մը թաւի դէզը, ևն . . .

Դեռ կը յառաջանան քաղաքականութեան այդ թշուառ ցոհերը, կ'երթան իրենց ցաւերը դնելու յոսարս բարեխաւս ? Կառավարութեան և օգնութիւն և օրինաց արամադրութեան գործադրութիւնը խնդրելու, եթէ երբէք յիշիս — զուհիւսրնուր խարազանի և կուսիկի հարսւածներուն տակ առիթ գտնեն բերան բանալու և կորսուեցէ՛ք, կըսեն, ձեր յեղափոխականներուն գիւմեցէք, անոնք լաւ պաշտպանել գիտեն զձեզ, եթէ երբէք քիւրտերու այդ վարմունքի շարժառիթը իրենք ընծայած չ'ըլլան :

Սրտերնին քարացած, լայլ և յողուելէ յողանձ խեղճ հայ — խնդրարկուններու խումբը գիւղը կը վերադառնայ՝ կարօտ մնացած կտոր մը ցամաք հայի՝ հսկելու աւերակաց վրայ, շողակաթ լուսնեակի ըստուերները ապաստանած կամ խումբ խումբ գերեզմաննոցի քարերն կը թնամ, աղանեակի մը վուլվուին, բուի մը վայնասունին աղբած տըխտը տրամադրութիւններու տակ, ձեռն ի ծնօտ գլխիկոր օրորուելով դեռ երէկ ողջ և այժմ՝ արիւնթաթաւ դետին խոշտանգուած սիրասուններու քաղցր յիշատակով, և բնութեան անհաւասարակչիւ ու անարդար դատարանայն հանդէպ յաւիտենապէս քիւրտներ, անիծաձայն ու ողբազին հայհոյելով անարդար եահլէին, որ հաճոյքով միայն կը դիտէր մարդկային կեանքի ցաւալի աստիճանաւորումներն, իր՝ չը գիտեմ ո՞ր կիրքի և բարկաճայթ վրէժինդրութեան թշուառացեալ ցոհերը . . .

ԱՍՊԱՐ

ԱՆՈՒՐՁՔ

1.

Ինձի այնպէս թուեցաւ թէ՛
Եգիպտոսի հողին վրայ Հայու-
թիւնը ներկայացնող Տ. Տ. Աղաւ-
նունի և Գոյունեան Սրբազանները,

2.

Գործակալ ինձի այնպէս թը-
ւեցաւ թէ՛
Տ. Տ. Գոյունեան և Աղաւնունի
Սրբազանները միեւնոյն համաձայնու-
թեամբ և ըստ բանին թէ՛ « Հովիւ-
քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչ-
խարաց », որոշեցին որ, Առաջնոր-
դարաններու կողմէն իրենց ճամ-
բորդութեանց յատկացուած ծախոր

3.

Գործակալ ինձի այնպէս թը-
ւեցաւ թէ՛
Յիշեալ Տ. Տ. Աստուածալախ
Սրբազանները, որոշեցին որ՝ հան-
դիսաւոր օրերու առթիւ ընդունու-
ուած կամ տրուած այցելութեանց
կառքի, սուրճի, ծխախոտի, ա-
նուշխնի և ընծախոտի իրենց թը-
սակէն հատուցանեն բարեպաշտօրէն
և ըստ բանին որ ասէ՝ « Ժառանգ-
ցէք կամ Աստուծոյ կամ Մամու-
նայի » և Եկեղեցւոյ կողմէն այս տե-
սակ ցուցադրանքի յատկացուած
գումարը, իրենք նուիրեն այրիե-
րու, որբերու, թշուառներու, ինչ-
պէս կը պատմուի թէ՛ Գրիստոնէու-
թեան առաջին օրերուն մէջ կ'ընէ
եղբոր Գրիստոսատիպ մի ոմն Ս. Հայր,
Մկրտիչ անուանեալ և Հայրիկ յոր-
ջորջեալ :

4.

Գործակալ ինձի այնպէս թը-
ւեցաւ թէ՛
Յիշեալ առաքելակրօն Սրբա-
զաններ, որոշեցին որ Բարձրագա-
տիւ Խըտիվին գահակալութեան
կամ Գահաժառանգ Իշխանին ծը-
նընդեան տարեգարձին առթիւ,
Աստուածաբարոյութեան հրաշա-
գործ ոգիով զրահաւորեալ և յա-
ջողեալ անկուռն յոյսով զօտե-
պնդեալ, վեհապետին հայրական
ներողամտութեան և հպատակասէր
գութին պիտի յանձնարարեն եղկե-
լի մը, նշան Զիմեանեան անուն՝

որ տասնուհինգ ձիգ տարիներէ ի
վեր շլթայակապ կը քաւէ իր մեղ-
քը, ինչպէս կը լսենք իր երկու
աչքերէն զուրկ այլ ևս :

5.

Եւ ինձի այնպէս թուեցաւ թէ՛
ինքնիրենս կ'ըսէի .
— Ո՛հ, քանի՛ պաշտելի կամ որ-
քան ահաւելի երազ . . .

ՆԷՕՅԻԹ

ՊԱՇՏՏՈՒԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆՈՐԴԱՐԱՆԻ
ԹԻՒ 536
Գահիրէ 1)14 Մայիս 908

Առաջնորդարան՝ ըստ որոշման
Ազգային Գաւառ . Վարչութեան
Պատ . Բաղադրական Ժողովոյ՝ այ-
սու կը յայտարարէ թէ՛ մամուռս
13) 26 ին երեքշաբթի, առաւուռն
ժամը 9 ին, ի Խան - Խալիլ ճէվա-
հիրճի վիւքալէսիին մէջ, Հանգ .
Յովհաննէս Պէյ Նախնուխի որդւոյն
Ալֆրէտ Էֆ. Նախնուխի գործատե-
ղին՝ Առաջնորդարանիս պատուիրա-
կին միջոցաւ և հրապարակային ա-
ճուրդիւ պիտի վաճառուին Հանգ .
Տիկին Աննիցա Նախնուխ Պէյի թէ-
րէքէին վերաբերեալ կանանց գոր-
ծածութեան յատուկ գահարեղէններ՝
ինչպէս մատանիներ, ժամացոյցներ,
ժամացոյցի շլթաներ, մանեակ .
օղ, գնդասեղ, ամեն ալ ակա-
նակուռ . նաև պարզ ոսկեայ ժա-
մացոյց մը, աղամանդներու մերկ
կտորներ և արծաթեղէն առար-
կաներ :

Վաճառուը կանխիկ դրամով
է և 3 առ հարիւր միջնորդէքը
գնողին կողմէ պիտի վճարուի :

Գնել փափագողք կը հրաւիր-
ուին նոյն օր, որոշեալ ժամուն
ներկայ գտնուելի վաճառման վայրը :

Առաջնորդ Եգիպտոսի Հայոց
Մկրտիչ Ս. Վրթ. ԱՂԱԽՈՒՆԻ

Կ Ե Ա Ն Ք Ը Գ Ա Հ Ի Ի Է Ի Մ Է Զ

II
Cairo - Heliopolis !
Հանրակառքի նոր դիմ մ'ալ աւել-
ցաւ Եգիպտական Ոստանը իր մէկ նոր
արուարձանին - առաջին Ովասիսին - հետ
միացնող և Անցեալ կիրակի խուռնե-
րամ բաղնիքին մը՝ քաջուած տար-
ուած նորութեան հրապոյրէն և արը-
ւած հանգստաւէտութենէն՝ գունդագունդ
գիմած էր հոն . ներկային մէջ աչքը
գարնող զբոսավայրը տեղւոյն գարնջը-
րատունն է, հոն է ամէն ցեղի ամէն
գոյնի ու հասակի ժամագրավայրը ճի-
մելովայրը, հով մը կը փչէ անգագար .
զօրաւոր հով մը որ թոքերդ կը լեցնէ
լիւրի . « ուշագրութեան հովին հո-
սանքին » - կը ձայնէ մէկէն ընկերս
հեռուէն մասնաւոր չեղող մը, անմի-
ջապէս կը կոճկուի մ' պատասպարուելու
համար . . . անձանթ երկայն մատ-
ներու փութկոտ այլ քիչ մը անփափ-
կանկատ խուզարկումներէն : Ելեքտա-
կան լոյսը երկաթ ձողերու գագաթէն
կ'ողողէ փողոցները և ի փախուստ կը
վանէ խաւարը . և հեռուն, քիչ հե-
ռուն - 10 - 15 վայրկեան հեռաւորու-
թեամբ - կը տեսնես Չէյթունի շէնքերը
որք կը կէտկիտեն տեսողութիւնդ, և
մարդ դիւրաւ կը փորձուի իր յետ մի-
ջօրէի զբոսական թափառումները բաժ-
նել երկուքի, ժամերուն մէկ մասը ան-

ցընելու Ովասիսին մէջ՝ մնացեալը վե-
րապահելով Չէյթունի, ուր հետի քա-
ղաքին ժողովն և անխորհրդապահ աչ-
քերէ՛ սրճարաններու անկիւններ ա-
պաստան կը փնտռեն ուղեկորոյս տա-
րակներ :

Իսկ անդին հանրակառքի դիմը նոր
անակնկալ մը վերապահած է Գահիրէց-
ւոցս . այդ գիծը, զորոյցի մը համեմատ,
պիտի երկարի մինչեւ, զիտէ՛ք ուր .
մինչեւ Սուէզ, երթեալի գիւնն ալ ը-
նականաբար ըլլալով մատչելի, և
յայնժամ պիտի ըլլալ Սուէզը Գահիրէի
մէկ հեռաւոր արուարձանը :

Անակնկալ մ'ալ Աղեքսանդրիա
վերապահած էր մեզ :

Ներկար դարձաւ մը վերջ մէկէն
ուսեցաւ երկու թերթեր միանգամայն :
Վերջերս հոն սկսաւ հրատարա-
կուիլ « Մտրակ » անուամբ կիսամեայ
քաղաքական և գրական թերթ մը խըմ-
բագրութեամբ Պ. Բարսեղ Շահպաղի,
և որուն առջին թիւը հրապարակե-
լաւ Մայիս 1 ին : Պարուենակու թիւը
սահուն գրչով համեմատած է իսկ գալով
նիւթերուն, ասոնց մէջ բաւականին
զանազանութիւն կայ . խմբագրականէն
վերջ՝ ազգային քրոնիկ մը, ընկերա-
կան նամակներ, նոյն իսկ ոտանաւոր
մը և . . . « Յառաջ » ի գրադարանը, և
նիւթերուն մէջ տիրող զանազանու-
թիւնը այնքան առաջ կ'երթայ որ՝ հոն
կ'երեւի Մայիս մէկի աշխատաւորական
տօնին առթիւ միջազգային ընկերվա-
րական խումբի մը հրատարակած թը-
ռուցիկներէն միոյն թարգմանութիւ-
նը : Հաւանականաբար « Մտրակ » հե-
տեի արտասահմանի Հայաթերթերէն
այն մասին ուղղութեանը որք « գարի-
թալիստ » է « պրոլետար » է դուրս սանկ
մեր շուրջ անցած դարձած մանր մու-
նըր խնդիրներով զբաղելու ժամանակ
չ'ունին :

Մենք Հայերս ստուգել շատ զար-
մանալի մարդիկ ենք . տակաւին պարզ
քալել մը չի գիտցած կ'ուզենք վախել
փոխանակ մեր ցաւերուն և ասոնց
անմիջական դարմանին վրայ նախ մը-
տածելու, մարդկութեան տառապանքն
է որ լայն տեղ մը կը գրաւէ մեր մշտ-
քին մէջ, ատով կը տարուբերուինք
և ամենէն առաջ ատոր ամբողջմիտ ըս-
պեղանիին վրայ կը խորհինք, փորձեր
մը կ'ընենք անոր վերքերը սպիացնե-
լու . նոր Զէլանտացիի մը հանգէպ և-
ղած մէկ զրկանքը կ'ըմբոստացնէ զմեզ
չէ՛ մի որ ան և մերք նոյն մարդու-
թեան անդամները ենք . բայց փոյթ չէ
թէ անդին զլացուի մեր արեւակիցնե-
րուն կեանքի գոյութեան էական տա-
րբերքը, մենք ասորի կը վիճինք կը վի-
ճարանինք, ի հարկին իրարու ալ գը-
լուխ կը պայթեցնենք գիտնալու համար
թէ, օրինակի աղագաւ, գործաւոր մը
հոգազնդիս այսինչ կէտին վրայ օրա-
կան ութ ժամէն աւելի աշխատելու է,
թէ ոչ հետեւելու է Անգլիական շորս
նախ երուն - այսինքն օրական ութ ժամ
աշխատութիւն, ութ ժամ զբօսանք,
ութ ժամ քուն և ութ շիւրի օրական :

Բայց մեծկակ սխալ մը պիտի ըլ-
լար, լոկ քանի մը յօգուածներու վրայ
յենլով, յախուռն եղրակացութեան մը
յանդիւր, և « Մտրակ » ի ուղղութեա-
նը ու գրեկակերպին մասին կատարեալ
գաղափար մը կարենալ կազմելու հա-
մար հարկ է սպասել ժամանակ մը և
ուսեցաւ աչքի առաջ իր մէկէն աւելի
թիւերը :

« Մտրակ » ի անմիջապէս կը յա-
ջորդէ Մայիս 11 ին ամենօրեայ « Ա-
րեւ » ը, որուն ճակտին վրայ երեցող
Ֆրանսերէնէն կը տեղականանք թէ՛ ա-
ռաւօտները հրատարակող քաղաքական

և և գրական լրագիր մ'է - journal armé-
nien, politique et littéraire, paraissant
à Alexandrie tous les matins. Խմբա-
գիրը ըլլալով ծանօթ հրապարակագիր
Պ. Յ. Օսեան :

Անա այսպէս Աղեքսանդրիա ուսե-
նալէ վերջ Գահիրէէ անջատ իրեն ու-
րոյն Ազգային Վարչական Մարմինը,
հիմայ ալ կ'ունենայ իրեն զոյգ մը
թերթերը, կը մնայ տեսնել զիրենք
գործի մէջ :

13 Մայիս 1908
ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

ՄԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒ

ՈՂՁԱՄԻՏ ԸՆԴԴԻՄԱԽՕՍԸ
« Արշալոյս » ի 480 - 17 թիւին մէջ
մեծ հետաքրքրութեամբ կարդացի Ա-
ղեքսանդրիանէն զրուած յօդուած մը,
Գ. Ո. և կամ « Հայ Հոռովմէական մը »
ստորագրութեամբ, իբր պատասխան
այն « Բաց նամակ » ին զոր այս էջերուն
մէջ ուղղած էի Գոյունեան Գերապոյ-
ճատին՝ իր գալստեանը պատեհ առի-
թով :

Եթէ հրատարակութիւն մը, կամ
ո՛ր և է լրագրական յօդուած մը, նպա-
տակ մը պէտք է որ ունենայ՝ հասա-
րակութեան մը բարւոյն և վերակեն-
դանութեանը աղնիւ ձգտումով, այս
տեսակէտով իսկ Պ. ընդդիմախօսին պա-
տասխանը անհունապէս հաճոյք կը
պատճառէ ինձի, ինչպէս և անշուշտ
ամէն ազգասէր ընթերցողի :

Այդ պատասխանը, ուրախ եմ ը-
սել, գէթ անուղղակի կերպով ալ,
կենդանութեան նոր նշան մըն է տեղ-
ւոյս մեր ազգակից հասարակութեան
համար . որովհետեւ դիտելի է որ այդ
խեղճ հասարակութեան յետաձեռնու-
թեան մեծագոյն պատճառներէն մին և-
ղած է յօգուածագիր քննադատներու
պակասը, հոգ չէ թէ այսօրուան առա-
ջին քննադատը կը հանդիսանայ ինձի
պէս այդ հասարակութեան գործերուն
անտեղեակ (իմա՛ տղէտ . . .) պ. ընդդի-
մախօսին բառով) մէկը :

Գրչի և և խորհելակերպի ազատու-
թեան դարուն մէջ ենք . և, ինչ որ
ալ ըլլայ իր հայեցակէտը, « Հայ Հոռով-
մէական » ին յանդուգն պատասխանը
պիտի արժանանար մեր անկեղծ գնա-
հատումին և ծափահարութեանը, եթէ
միայն այնքան շիւ ու ձախաւեր կեր-
պով մեղանշած չլլար ամենատարբա-
կան պատշաճութեան դէմ ու, իր ընդ-
դիմախօսութեան մէջ սպրդեցուցած չլլը-
լար շարք մը ծիծաղաշարժ բառակոյ-
տեր, ինչպէս « Կաթողիկէ հասարակու-
թեան մասին տղէտ . ծիծաղելի . հան-
րութեան ողջամիտ գասակարգ . կոչկա-
կարի առակ » ևն :

Եւ այս ամբողջը հասցէին անոր՝
որ իր պատասխանութեան մեծագոյն մա-
սը անցուցած է « Կաթողիկէ » միջա-
վայրերու մէջ, pratiquant մէկը չէ
գծարազաբար, բայց Տարպէ-Կիւնէնաի
հասարակական գործերու մասին իր
գիտցածները շատ ու շատ են :

Բայց, ինչո՞ւ այդ բոլոր տեղը ո-
րակականները, արդեօք անոր համար
որ ըսածներս ծայրէ ի ծայր ճշմարտու-
թիւններ են և պահանջներս՝ որոնք
թէպէտ զժուարին ըլլալուն համար՝
իղձեր, ազնիւ իղձեր և անհրաժեշտ
պէտքեր ըլլալէ չեն գաղղիր : Բաւական
կոյր ըլլալու է մարդ այդ պէտքերը և
այդ վերքերը չի տեսնելով, և բաւա-
կան ալ յետաձեռն իրաց ախուր կացու-
թիւնով գոհ և, ձեռքերը, ծալած Ալլան
փորձ ըսելու համար :

Պ. ընդդիմախօսը աններելի կը
գտնէ որ « հասարակութիւնը մեռած է
եղբր . և այժմ կենդանութեան նշան-
ներ ցոյց կուտայ » ըսած եմ : Ի՞նչ ը-
սելու է ուրեմն . ինք պէտք է որ գիտ-

նար թէ հասարակութիւն մը մահամերձ էր... Գ. ընդդիմախօսը կանգիտանայ...

մանէս անդին անցնիլ. հետեւաբար պիտի խնդրէի Պ. ընդդիմախօսէն որ այս...

Բայց ցաւալին ու ծիծաղելին հոն է վերջապէս, որ Պ. ընդդիմախօսը, կարծես...

Բայց Միխիթարեանները ինչ յարաբերութիւն կրնային ունենալ Եգիպտոսէն...

Եւ Պ. ընդդիմախօսը այս անտեղի ակնարկութիւնը կրնէ անոր՝ որ Միխիթարեաններու...

Եւ այս ամբողջ սովորութիւնները, թերեւս, մեր մետաստաներորդ ժամու մէկ մեղքին համար...

ՃՇՏՈՒՄ ԻՆ ՀԱՄԱՐ

Տ. Բարսեղ Շահագ «Արև» օրաթերթին մէջ «Արշալոյս» ի նախորդ թուով հրատարակուած «Շահէն» անուանով մէկ «բանաստեղծութեան» համար կ'ըսէ թէ ինքը չէ գրողը...

Պ. ընդդիմախօսը կը գործմանայ նոյնպէս թէ ինչու նոր եկեղեցի մ'ուղած եմ, քանի որ Պոլսոյ մէջ եկեղեցիներ ալ կան որ Մայրաքաղաքին ամենագէշ փողոցներու մէջ կը գտնուին...

Սորապէս կը ցաւիմ որ Մանթաշօք մը չեմ այս բոլոր թերթիմացութիւններուն գործնական կերպով պատասխանելու համար...

Ս. Ս. Ատիւնի. Հաճեցէք անգամ մը «Արշալոյս» ի տպարանը հանդիպելի. կարեւոր խնդրոյ մը համար:

ԶԳԱՅԻՆ ԼՈՐՔԵՐ

Այժմեութիւններուն մէջ անկարեւոր տեղ մը չ'պիտի գրուէ, կը կարծենք Ազգ. քսանդրիոյ պատկի մէջ...

Սակայն չեն գիտեր ինչ մը կայ կեզր. Կրօնական ժողովոյ ներկայ որոյման մէջ՝ որ գոհացուցիչ ըլլալէ հեռի կը մնայ:

Տէր Գեորգ Հիւրմուզեան ըսուածին հակակրօնական շահատակութիւնները մէկ երկուքէ շատ աւելի են:

Պայտիսի պարագաներու հանդէպ Պատրիարքարանը տարբեր և զօրաւոր միջոցներ ունէր ըստ արժանւոյն զսպելու համար զայն, սա...

կայն ինչպէս կերելի, թոյլ կուտայ որպէս զի զբաղու մնիք ստեղծէ կեզրօնական կրօնական ժողովին, և կրամ ուրիշ տեսակէտներ ալ գոյութիւն ունենալու են...

Ուրիշ առիթներու մէջ աւելի ընդարձակօրէն պիտի զբաղինք կրօն. ժողովոյ այս կարգի տնօրինութեանց և անոնց հետեւանքներուն վրայ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՐՔԵՐ

Ուրբաթ օրը Պարսից վեհափառ Շահին ծննդեան տարեդարձին առթիւ, Ն. Վսեմութիւն Փախր էլ Վիզէրա Միհրան Խան Գալֆաեան, Պարսկական Ընդհանուր Հիւպատոս Եգիպտոսի, Գոնթիւնիսի Օթէլին մեծ սրահին մէջ պաշտօնական ամենափառաւոր ընդունելութիւն մը կատարած է:

Ժամը տասն ու կէսին Արտաքին գործոց նախարարութեան Դեր-Քարտուղարը, և տասն և մէկին Յոյն եպիսկոպոս մը իր հետևողներով, ի դիմաց Փօթիոս Պարսիկ գաղութին երեւելիները և բոլոր Իրանագիտական Գործակալութեանց ներկայացուցիչները, և ուրիշ շատ մը ականաւոր անձնաւորութիւններ շնորհաւորական այցելութիւն տուած են:

Ն. Վսեմութիւն Միհրան Խան յանուն Իրեն և Պարսիկ գաղութին շնորհաւորական հեռագիր մը զրկած Պարսկաստանի Արտաքին Գործոց նախարարութեան:

Սոյն շքեղ ընդունելութեան մէջ՝ եթէ աչքի զարնող մեծ պակասութիւն մը եղած է, այն ալ մեր Առաջնորդին բացակայութիւնը և կամ Առաջնորդարանի կողմէ պատգամաւորութիւն մը չ'գտնուիլն է:

Ինչ կարեւոր զբաղում ունէր արդեօք մեր Առաջնորդարանը՝ որ Պարսիկ հայապաշտպան կառավարութեան վեհապետին եղած պատիւներուն մէջ շնորհաւորական այցելութիւն մը տալը իսկ կը խնայէ:

Ասոր պատասխանը Պարսկաշահի հայերէն սպասելու է...

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 16 Մայիս. - Տէյլի քրօնիքը կը կարծէր թէ Պ. Գաւկոնի կողմէ առաջարկ ւր Երկաշարուած է Կառավարութեան, Ծրանասի և Անգլիոյ միջև առեւտրական դաշնադրութեան մը կնքուիլն հուսար:

Գիշ յետոյ. - Մեծ Բրիտանիա և Ծրանաս օգտուելով Պ. Գաւկոնի Անգլիա Երկաշարութեան, պաշտօնապէս վիճարկութեան նիւր պիտի ընեն առեւտրական դաշնադրութեան մը կնքուիլն խնդիր:

Բարիկ 17 Մայիս. - Թերթերը կրնան թէ Արտաքին գործոց նախարարութեան կը հերքէ այն յուր թէ Ծրանաս վերջնագիր մը զրկած է Քուրթիոյ Հերաքիի (Կրկի) հանկերու խնդրոյն համար:

Կալիպարս 17 Մայիս. - Ուժանակ մը պայքեցաւ քրանկի զօնի վրայ, Կառք մը խորակուեցաւ և չորս անձրորներ վիրաւորուեցան, Կը հաստատէր թէ՛ սպեայ ազդարարութիւններ ցրուուած են, խորհուրդ տալով ճիշդակերտն որ առաջին կարգերով չի անվարողն:

Թեհերան 17 Մայիս. - Նախարարապետը, Երզնակ - Կու Սարակե հրամարած է, Սակի - Կս - Տեղիէ՛ ու ելնակական նախարար եր անոր կը յաջորդէ:

Կ. Պոլիս 17 Մայիս. - Կրտսեր թէ Բ. Դուրը քողոքագիր մը կը պատրաստէ Կրտսեական միջազգային զօրախումբերուն վարուելախնդիրն զիւն:

Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Անցեալ Ապրիլ ամսոյ 19 ին կազմակերպուած Հնդկական վարագործի վիճակահանութիւնը Կիրակի օրը 17 Մայիս, Մեծ Սրճարան Հայկականի մէջ տեղի ունեցաւ ի ներկայութեան մէկ քանիներու:

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսլի փողոց թիւ 6, Սիմլորի մասնա-

Եր զնէ և կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի Ֆօն-սիէի հին և նոր, Բուժելի երկաթուղեաց և Բանամայի Ֆրանսական վաւարացաւ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի:

Արժեթղթերու արդի խիստ նպատաւոր գներէն կրնան օգտուիլ Եգիպտոսական մեր ազգայինները մեզի դիմելով:

Մասնավճարներով - 25, 50, 100 - կարելի է արժեթղթերու տիրանալ, և մասնաւոր պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել:


Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, և ստեւարական ամեն կարգի Պոլսոնը զեղջիւղ պատրաստակաւութիւն:

Սեղանաւորական և Պորսայի գործառնութիւններ և ա'յս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ վստիճով կը կատարուին:

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵՍՆ

ԹՈՒՐԻՍՏԱԹ ՄԹՕՐ (TOURISTS' STORES)

Նուպար բաշա փողոց՝ Մեխիլիայ Օ. րեյիկ զիւնսը



Քրքուէթ "Crossett" Ամերիկայի լաւագոյն գործարանն է. զիմացիւն և անգրիստ կոշիկներու. որոյ Եգիպտական միակ ներկայացուցիչն է ԹՈՒՐԻՍՏԱԹ ՄԹՕՐ:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԽԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱՎԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱՎԱՆՍԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՍԻՐ

ՅԱՏԿԱՆԻՈՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱՆ Է .

Արևելեան ընտիր ծիախոտներէ պատրաստուած թարմ սրկարեթներ անարցելի ածան դներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անդամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիէ այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ածանցութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անտխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՍԻՐ

ՓՈՒՅԼ ԱՎ

Երկինք փառի կայսրուսակ
Ըսէ ինձի ի՞նչ, վր'սակ .
Փոցիս ինձի՞նք մի փառակ
— Պի՛ր քի՛ր քի՛ր քի՛ր կրակ .

Փայտակն ան շողորդուն
Անկերը միշտ ինձի թոյուն .
Թաղուի խորը մթնոլորտում
Գնելու . վառել իմ հոգոյս սուն .
1908 Մարտ 19 **ՇԱՀԷՆ**

ՅԱՆԵԼՈՒՍԾ

Յառաջիկայ 20րդ թիւը Յաւելուածով պիտի հրատարակուի .
Իւրաքանչիւր թիւը մէկ զէ ողջ է ձեռքէ գնողներու համար .

ԺՈՂՈՎՈՒՐԻՒՆ ՄԱՏՆԱՂԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուէին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »
« 3 Սուլթան Համիտ Ինչպէս մեռաւ Գին 1 Քրանգ

Ժողովուրդին Մատենադարանի գրքոյնէն ընտրուած է Տ. Ա. Պարեան, եգիպտահայոց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով . Թրքուէին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլէն եգիպտացաղթ հայութեան առաջին օրերուն մի մասնաւոր յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով . Գին մէկ « Արշալոյս » խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ հասցեով .

A. BALKAN
(Egypte) Le Gaire

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաղիւտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիւմաց Գաթէ Տր Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍԱՆԱՃԻՆԻՆՈՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐներն են ևւ արտադրած մինչև ցարգ 17.000.000 ծախուած է .

400 է աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, երաշխատուած մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիեզերական արտասահմանցիական մեջ ստացած է .
ՀԱՅԹԱՅՈՒՅ ԲՐՈՒՄԻՈՅ **ՀԱՅԹԱՅՈՒՅ ԱՆԳՐՈՅ** **ԿԱՅՏԱՆԱԿԱՆ**
ԿԱՅՏԱՆԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ **ԵՒ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ**
ՀԱՅԹԱՅՈՒՅ Ն . Բ . ՆԱՅԻՎԱՆԱՆ ՏԱՆ

Ձեր դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԸՐ մեքենաները համար, յաճախորդաց տուններուն մէջ .

Վարձանց դիւրութիւն

Փոխանակութիւն ճիշտագոյն և նորոգութիւն ամեն վարդի մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ



ՀՈՎՈՒՆԵՐԳԱԿԱՆ
(Հեջուակ)
ԿՈՎԵՐԸ (*)

Տ. ԵՐՊԱՐՅԱՆ
Բարեկամիս

Պի՛ն ձեռք'ի մա ղեղին կոյնը .
— Բընուրեան զուսկներ հարազատ,
Ժող կուզան մա ղեղին կոյնը,
Կը շընջեն մախուր օր քի՛ր ազատ .

Երբ ծար'ի ինձ կ'ընկնէր ինձ զուր պարուկ,
Սեղանին վարդ է միշտ, թեւ անբան,
Բանական մարդոց պէս չեն փախուի .
Որ մաշեն մախուրին ինձ անկե քան

Ունեղով, իրակով, անմեկ յո'յժ
Ժուժկալ եւ, և ուսի կոտուի .
Բայց մարդիկ երբ առանց գորովի

Կը վարդին աննց հե՛ս՝ ո'ի վասոյժ,
Որ զագիտի դիակներ կը դառնան,
Եւնեղներ կը սրխին, կ'ըստնանան .
Լոզան . Օգոստ . 907 **ՓՈՍՈՒՈՍԾ**

(*) Չուրիցերեան պատկերազարդ ֆարք-քոտայի մը քաղուած .

Ի Ա Ն Ո Ւ Գ Ի Ր Բ Ե Ր

« Արշալոյս » ի սպառնալիս մէջ, Շէթիք բաշարի պարտէզին շի՛մաց կը վաճառուին Պ. Արշակ Չոպանեանի հետեւեալ հեղինակութիւնները .

1. Գեթուածներ Գին 5 Քր .
2. Մերտիչ Պէշիկեթաշիւանի կեանքն ու գործը Գին 5 Քր .
3. Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ գրինակներ Գին 10 Ղր .

Ուսուցիչներու և մատուցակներու համար մասնաւոր գեղը .

ՏՐԲ ԵՍԹԻՐ Լ. ՃԵՅՈՅԱՆ
ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԱՍԵՍ . ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաշտակ վիրահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու .

Մանկաբարձուհի և մանագէտ՝ կանանց ծննդական գործարարներու և ակիրորդեան ախտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու .

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիւանդացի կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները .

Հիւանդ կ'ընթերցի անկն օր կէս օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեքօրի ազգաց արքի դարձանում .

ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ
Նորոգիչ կարի մեքենաներու, փոփոխակերու և կազի վաճառաներու .

Տասներկու տարին « Սինկըր » ընկերութեան քով մեքենայարդարութեան զարգիլէ յետոյ, այժմ զինովուճառ Ջախարիա Գոստանթինուի քով պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարդարման ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներ խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի սրամադրէ կարի մեքենաներու, ֆոնօկրաֆներու, կազի վաճառաներու, նորոգութեանց և յարդարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան գիւմել իր տունը Պապը - Շէ՛րիէի կողմը Շարա Պէշգլա՛ կրնան հարցնել նաեւ Մեծ Արճարան Հայկականի Տնօրէններուն, և զարձեալ գիւրութեան համար քարթ բօսաշով մը կրնան գիւմել « Արշալոյս » Տպարանին . նշանակելով իրենց ձագէն, ֆողոցին անունը և Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ .

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ .

19 - 50

ՆՊԱՐԱՎԵՃԵՌ
ՇԱՐԷ ՄՈՒՀԱՍԷՏ ԱՆԻ, ՊԱՊ-ԷԼ-ԿԱԷՔ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբօնի վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատնի միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնայուն շեք մը բանած է տարիներէ Քալէր .

Նպարեղէններու վերաբերեալ աւելն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեանց գնողներու համար, անթիւրի են ստան վաճառատեղոյն մէջ .

Մեր յաճախորդները գո՛՛ծ խնդրու նպարակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան և գնումին բանն շատ խնամք և նոյն իսկ բժախնդրութիւն կրնենք . Ուրիմ նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թերթը է և մաքուր մեր քով .

Կշիտը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն աւանած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ զգո՛ծ մնացած են .

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիւմելք է Պապ-Էլ-Կալէ՛ր մեր վաճառատնի և չ'պիտի գըշաք .

16-41
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ